ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"21" հոկտեմբերի 2024թ. N 2506-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.06.2024թ. N 1345-Ա, 12.07.2024թ.N 1590-Ա, 20. 09.2024թ. N 2221-Ա, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 13.03.2024թ.N 126-Ա հրամանները և ՀՀ էկոնոմիկայի նախարարության 11.10.2024թ. N06/20367-2024 գրությամբ տրված եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնությունը տրամադրել ստորև նշված ավիաընկերությունների օդային տրանսպորտով մեկնող ֆիզիկական անձանց.

1) «Զայնա սաուզերն» ավիաընկերություն՝ 22.06.2024թ. մինչև 22.06.2027թ. (թույլտվություն՝ N ARM-210006-24, տրված 17.06.2024թ.-ին).

2) «Հայկական Ավիաուղիներ» ՍՊ ընկերություն (Երևան-Ուֆա-Երևան 09.07.2024թ. մինչև 13.01.2026թ., Երևան-Կազան-Երևան 09.08.2024թ.մինչև 08.11.2025թ., Երևան-Դելի-Երևան չվերթի մեկ ավիակից սկսած 36 ամիս ժամկետով).

3) «Ասաջեթ Էյրլայնս» ավիաընկերություն՝ 16.07.2024թ. մինչև 16.07.2027թ. (թույլտվություն՝ N ARM-210012-24, տրված 12.07.2024թ.-ին).

4) «Ազիմուտ» ավիաընկերություն (13.03.2024թ-ին N 024/2024 և 20.09.2024թ.-ին N ARM-210032-24 թույլտվություններում տրված ժամկետով).

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

10/21/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան